7. ՔՅԱԼ ՄԱՆՉԸ

Վախտի մեկը մե Քյալ տղեմ կէղնի։ Էղի կէրթա մե աղայիմ ծառայի կը։

Կըսե.— Հախս ի՞նչ պիտի տաս։

Կըսե կը.— Օխտը տարի աշխատի, ախչիկըս տամ քեզի։

Օխտը տարի Քյալ մանչը էդոր աշխատավ։ Օխտը տարին լմննալու ետքը, աղայի ախչկան ուզող էկավ։ Աղեն էլ տվեց ուրիշի։

Էդոնք նշանելեն վերշ Քյալ օղլան ըսեց.— Դու ընձի օխտը տարի աշխատեցուցիր, օր ախչիկդ ընձի տայիր. հիմա չը տվիր, խաբեցիր ընձիկ։ Օր չես տա, ես էլ չեմ աշխատի։

Քյալ օղլան հերսոտավ ու ելավ գնաց։ Շատ գնաց քիչ գնաց, աստված դիտե, օրվա մեկը մե սարի աթակըմ գնաց, մե թոնըմ առավ այղվեր։ Օր թոնն էլավ, աշեց, աղվեսի ծակըմ տեսավ, մտավ աղվեսի ծակը։ Թոնն օր կտրավ, ելավ չոր ընկավ ճամփա, էլ նա թրշավ, նա բան։

Քիչ առաշ գնաց, մե գավրիշըմ ռաստ էկավ։

Դավրեշ ըսավ.— Քյալ օղլան, էս ի՞նչըխ է օր գու չոր ժուռ գուքաս, քու թարաֆըղ թոն չէղա՞վ։

Ըսեց.— Էգման թոն էղավ օր, աշխար թրշըվավ։

Ըսեց.—Հ՚պը դու ի՞նչըխ ես չոր մնացե։

Ըսեց.— Ես աֆսոն գիտեի, կարգցա, չոր մնացի։

Ըսավ թե.— Էդու աֆսոն ընձի էլ խրատ չե՞ս տա, ես է սովրիմ, որ թոն դա, կարդամ, չոր մնամ։

Ըսավ.— Եթե ըամ է դու ընձի խրատ տաս կը, ես է քեզի կըսեմ։

Դավրեշն ըսավ.— Ես աֆսոնըմ կըսեմ, ձեռներդ դի դլխուդ վըրեն։

Քյալ օղլան էսման ձեռները դրեց դլխու վրեն, էդիկ աֆսոն քաշեց, ձեռները դլխուն կպավ, դլուխը ձեռներուն կպավ։

Դավրեշն ըսավ.— Դե թափ տու տեսնամ կրա՞ս ձեռներդ բանա։

Քյալ օղլան թափ տվեց, չը կրաց բանա։ Մե աֆսոն մե քաշեց, ձեռները բացվավ։

Էրկու անդամ թաքրըրեց Քյալ օղլանը սովրավ էդ աֆսոնը։

Ըսավ— Քուկդ ինչ է, հիմա է դո՛ւ ընձի խրատ տու։

Ըսավ.— Իմս զոլայ է, թեզ կը սովրիս։

Ըսավ.— Ի՞նչ է, ըսա տեսնիմ։

Ըսավ.— Թոն օր կընե, մտի աղվեսիմ ծակը, թոն օր կտրավ՝ ելի չոր-չոր պտտե, թե որ թրշվար էկե քովս էն չախ։

Դավրեշն ըսավ.— Հա՛յ աստված քու բալեդ տա, Քյալ մանչ, օր դու ընձի ռաստ էկար, իմ աֆսոնը սոբվար ու ընձի խաբեցիր։

Հիմի Քյալ մանչը ճամբեցեն ետ դարձավ, էկավ աղի տուն։

Աղեն էկավ, տեսավ օր Քյալ մանչն էկեր է։

Աղեն ըսավ.— Քյալ մանչ էկա՞ր։

Ըսավ.— Հա՛, փոշմնա, ետ դարցա ճամբեն, էկա աշխատեմ քըղի։

Ըսավ.— Աշխատի, մեկել պիճի ախչիկս քեզ կուտամ, թալաշ մենի, հիմա է պզտիկ ախչիկս կուտամ։

Ըսավ.— Զարար չունի, ես է կաշխատիմ։

Քյալ մանչը օր հոդ աշխատավ, արթըխ ըսել դուզե, որ երսուն օր մյուդեթով, մեծ ախչկա նշանած էկավ էդոր տեսության։ Էդոր զոնքըշները բոլորը քով թոփ էղան. վախտ օր անցավ, էդոնք գնացին քովեն, մնացին նշանածն ու նշանլուն։ Քյալ օղլան պայվըտեր էր հոդտեղ։ Էդոնք օր իրարու հետ շատ խորաթեցին, ելան իրար գրկեցին, Քյալ մանչը աֆսոնը քաշեց, էդոնք իրար կպան։

Սաբախտան ախչկան մերն էկավ, ըսավ.— Ցորեկ էղե, ելեք վե, ամոթ է։

Ելան վե, ախչիկ ըսավ.— Թող ընձի, տղան ըսավ թող ընձի, տեսան օր իրար են կպե։

Արթըխ, աշեց օր չէղավ, կնիկ վազեց, իրկան խարար տվեց.— Մեր փեսեն էկեր էր մեր ախչկան տեսության, ի՛նչըխ էլեր էր, գիշեր իրար կպեր են։

Էդիկ էկավ աշեց օր կպուկ են։

Ըսավ.— Կա չըկա, էսի Քյալ մանչեն հասավ էս մազարաթը մեզի։

Հերը կանչեց Քյալ մանչուն, ըսավ.— Քյալ մանչ, փեսես ու ախչիկս իրար կպեր են, դու ես էրե։

Ըսավ.— Դու չգիտե՞ս ես եմ էնողը։ Օխտը տարի դատա, չը տվեցիր ընձի։

Ըսավ թե.— Հիմա ի՞նչ կըսես։

Ըսավ.— Ախչիկդ հիմա կուտաս ընձի, պոծըցնեմ կը, թե չէ դու գիտես։

Նշանածը բոռաց ըսավ.— Ընձիկ պետք չէ, քեզի՛ էլնի էս ախչիկը, քանի օր էմման էլավ։

Աղեն ըսավ.— Թաք պրծու էսոնց, ես ախչիկը կուտամ քեզի։

Քյալ մանչը աֆսոնըմ ըսավ՝ էդոնք արձըկվան իրարմե։

Էստիցեն օր պրծուց, նշանածը թողեց փախավ, ըսավ.— Էլ ինձի էդ ախչիկը պետք չէ։

Բերին արթըղ էդ ախչիկ տվին Քյալ մանչին, էրին տընփեսա, նստավ, հարի մեռնելու չափ նստավ հոդ։